ՀՍԱՅԱԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ
(ԱԻ)
ԱՐԵՎԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Արևի պաշտամունքը սկիզբ է առել Հայկական լեռնաշխարհում վաղնջական ժամանակներից և հարատևել է հազարամյակներ շարունակ: Այս երևույթի հնագույն նյութեղեն վկայություններն են ժայռապատկերներում հանդիպող արևի զանազան պատկերումները, բրոնզեդարյան ժամանակաշրջանի դամբարաններից հայտնաբերված ամենատարբեր պաշտամունքային իրերը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժայռափոր կոմպոզիցիոն սյուժեներում արևի մարդակերպ աստվածությունների կերպարները՝ կենդանիների և արևի երկրաչափական պատկերների ուղեկցությամբ: Այս պաշտամունքի նյութեղեն վկայություններ առկա են նաև վաղ երկաթե դարի մշակույթում՝ դամբարաններից գտնված հնագիտական նյութերում, խեցեգործական առարկաների՝ ստվորների, կուժերի, թասերի վրա, որոնց հիմնական մասը ծիսական կիրառություն են ունեցել:

Այս ողջ հնագիտական նյութը, ինչպես նաև մեր հոգևոր բանավոր մշակութային ժառանգությունը՝ ավանդությունները, էպոսը, լեգենդները, հանելուկները, հեքիաթները, ծեսերն ու սովորույթները վկայում են, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչների (ինչպես նաև այլ հնագույն ժողովուրդների, օրինակ՝ եգիպտացիների) համար արևը հանդիսացել է նրանց կենսափիլիսոփայության առանցքներից մեկը, նրա հետ է կապվել բնության և կյանքի զարթոնքը, գարնան վերադարձն ու ընդհանրապես վերածնության, պտղաբերության և արդարության գաղափարները:

Արևի պաշտամունքի հնագույն օրրան է Վանա լճի ավազանը: Այս մասին են վկայում թե՛ երկրորդ հազարամյակի խեթական, թե՛ ավելի ուշ շրջանի ուրարտական սեպագիր աղբյուրներում, ինչպես նաև հայկական առասպելներում և ավանդազրույցներում պահպանված նյութը: Խեթական աղբյուրները ներկայացնում են Արևին նվիրված հիմներ[1], ինչպես նաև Օվկիանոսի կողմից Արևի առևանգման[2], Արևի և Օվկիանոսի մասին առասպելներ[3], որոնցում առկա են ծովից բարձրացող, ինչպես նաև Օվկիանոսի մեջ սուզվող Արևի մասին պատկերացումները: Ըստ հանրահայտ ռուս գիտնական լեզվաբան Վյաչեսլավ Իվանովի, ծովից կամ մեծ լճից ծագող արևի մասին խեթական այս պատկերացումները կարող են կապված լինել խեթերի նախնական տարածման շրջաններից արևելք ընկած որևէ մեծ լճի կամ ծովի հետ: Եվ վարկած է առաջադրում, որ դա կարող է լինել նաև Վանա

լիճը[4]: Խեթական վերոնշյալ Արևին նվիրված հիմներից մեզ են հասել խեթական միջին թագավորության շրջանից: Դրանք ծիսական տեքստեր են, որոնք հավանաբար արտասանվել են Արևի աստծուն զոհաբերություններ կատարելիս: Հետևյալ հատվածում խոսվում է Արևի՝ ծովից ծագելու մասին. «Տե՛ր իմ, Երկնային Աստված Արև, մարդկության հովիվ: Ծովից ես դու բարձրանում վեր, երկնային Աստված Արև»: Մյուս առասպելում խոսվում է այն մասին, որ Օվկիանոսը (ծովը կամ մեծ լիճը) բարկանալով երկնքի, երկրի ու մարդկային ցեղի վրա, կլանում է Արևին: Նշենք, որ հնագույն առասպելաբանական մտածողության համաձայն, ծովը, ջրային տարերքը նույնացվում են նաև անդրաշխարհի հետ, և այս առասպելում ի հայտ են գալիս այն պատկերացումները, որ Օվկիանոսը կլանում է մայր մտնող Արևը, որն առավոտյան վերադարձվում է պտղաբերության հովանավոր խեթական Տելեպինուս աստծո կողմից: Հաջորդ առասպելում պատմվում է այն մասին, թե ինչպես է Օվկիանոսը հյուրընկալում Արևին՝ նրա համար պատրաստելով գահ, փղոսկրյա սեղան, իսկ Արևի Աստվածը երկնակամարով ճանապարհ է ընկնում Օվկիանոսի մոտ և իջնում ներքև հանգստանալու: Ուշագրավ է, որ ըստ վանեցիների պատկերացման, Արևի ննջարանը գտնվում է հենց Վանա լճի հատակին. «Արևը կըմտնի ծովը, կըլողնա, մաքրվելու և հանգչելու ըրած ուղևորութենեն... անոր անկողինը ծովուն սուսկը ձգված է փրփուրի վրա»[5]:

Ավելի ուշ, ուրարտական ժամանակաշրջանում, Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան՝ հայկական Վանը, հանդիսանում է արևի աստված Շիվինիի[6] և նրա կնոջ՝ Տուշպուեայի պաշտամունքային կենտրոնը: Վերջինիս անունով էլ կոչվել է Տուշպա-Վան քաղաքը: Այս առումով հայկական ավանդազրույցներում պահպանվել է Վանա լճի ավազանում գտնվող Արճակ լճի հետ կապված երկու ավանդություն: Արճակի ջրերում ապրում են մի հրեղեն տղամարդ, մի հրեղեն կին և մի հրեղեն ձի՛: Ըստ մյուս լեգենդի՝ Արճակի լճում ապրում է հրեղեն հարսը, որը լողացել է Արճակի աղբյուրում: Ասում են, թե այս աղբյուրի ջուրը խմողը կբորբոքվի անարատ սիրով, իսկ ձայնն էլ անուշ կդառնա[8]: Ենթադրելի է, որ այս հրեղեն հարսի կերպարում պահպանվել է Արևի աստվածուհու մասին Վանա լճի շրջակայքում գոյություն ունեցող հնագույն հավատալիքների արձագանքը, աստվածուհու, որն օժտված է սիրո և պտղաբերության գործառույթներով: Իսկ հրեղեն տղամարդու, կնոջ և ձիու մասին ավանդությունում ակնհայտորեն նկատելի է արևային աստվածային զույգի և այդ պաշտամունքի խորհրդանիշը հանդիսացող ձիու մասին պատկերացումների արձագանքը: Հայտնի է, որ հնդեվրոպական առասպելաբանություններում արեգակը պատկերացվում է ձիեր լծած կառքով: Հայերին ևս բնորոշ էր ձիու և Արևի աստծո կապը: Քսենոփոնը վկայում է, որ հայերը Արևին կամ Արևի

աստծուն ձիեր են զոհաբերում[9]: Այս մասին վկայում են նաև հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված ձիու զոհաբերության բազմաթիվ փաստերը:

Հետագայում Վան քաղաքը հայկական առասպելաբանության մեջ կապվում է Շամիրամի հետ, որի կերպարը մասնագետները բխեցնում են Նինվեի Իշթարից (միջագետքյան սիրո և պտղաբերության աստվածուհի): Վան քաղաքը և նրա շրջակայքը, ըստ պատմահայր Խորենացու, կառուցել է տվել Շամիրամը[10]: Նրա մահը ևս տեղի է ունենում Վանա լճի ափին. փախչելով իրեն հետապնդողներից՝ նա հասնում է ծովի ափին և հուռութները նետելով ծովը՝ քարանում է[11]: Ակնհայտ է Շամիրամի կապը Վանի, ինչպես նաև ուրարտական Տուշպուեա արևի դիցուհու կապը Տուշպա-Վան քաղաքի հետ: Հնարավոր է ենթադրել, որ այս երկու կերպարները միաձուլվել են:

Ուրարտական ժամանակաշրջանում Վանա լճի խալդյան դարպասները կոչվող ժայռին է փորագրվել ուրարտական ողջ պետական դիցաբանն արտացոլող պաշտամունքային սեպագիր արձանագրությունը: Խալդին ուրարտական դիցարանի գերագույն աստվածությունն էր և, դատելով պատկերագրությունից, ունեցել է արևի աստծո հատկանիշներ: Հետագայում նրա կերպարը հավանաբար միաձուլվել է Սիթրայի և հայկական էպոսի չորրորդ ճյուղի գլխավոր հերոս Փոքր Մհերի հետ: Ըստ ավանդության հենց այդ նույն խալդյան՝ հետագայում Մհերի դուռ կոչվող դարպասից է ներս մտել աշխարհի անայտարությունից խռված Փոքր Մհերը: Կարծիք է հայտնվել, որ Խալդիի և Սիթրայի պաշտամունքները միաձուլվել են, որին մասնակցել է մի միջնորդ աստվածություն[12]: Խալդիի, Սիթրայի և Սհերի կերպարների նույնականությունը ապացուցվում է նրանց պաշտամունքներում առկա որոշակի ընդհանրություններով, օրինակ՝ առյուծի, գինու և խողողի առկայությունը նրանց պաշտամունքներում[13]:

Հայկական հավատալիքներում արևային հատկանիշներ ունեցող աստվածություններից է նաև Վահագնը. «նա հուր հեր ունէր, ապա թէ բոց ունէր մորուս եւ աչկունքն էին արեգակունք»[14]: Վահանգի մականունն էր վիշապաքաղ, այսինքն, վիշապասպան, նա ծնվելուց անմիջապես հետո պայքարի մեջ է մտնում վիշապների հետ և հաղթում է նրանց: Հայկական ավանդապատումներում Վանա լճի մասին պահպանվել է հետևյալ զրույցը. Վանա լճում ապրում էին ահռելի վիշապներ, որոնց հրեշտակները բարձրացնում էին արևի մոտ, և արևը այրում էր նրանց՝ վերածելով սև մոխրի[15]: Վահագն էլ, որպես արևային աստված, համարվում է վիշապասպան: Ընդհանրապես, վիշապի հետ արևային աստծո պայքարի մոտիվը հնդեվրոպական հիմնական առասպելական սյուժեներից է: Ճիշտ է, Վահագնի պաշտամունքային կենտրոնները չեն կապվում Վանա լճի հետ. նրան նվիրված տաճարները գտնվել են Աշտիշատում, Ահեվականում, Փոքր Աղբակում,

սակայն երկնքի, երկրի և ծովի երկունքից ծնվող ասածն մասին նկարագրող հետևյալ հատվածը հիշեցնում է արևային աստծո ծովից ծագելու մասին խեթական, վեդայական պատկերացումները. «Երկնէր երկին և երկիր, Երկնէր և ծովն ծիրանի, Երկն ի ծովուն ունէր զկարմրիկն եղէգնիկ»[16]:

Արևի աստծո խորհրդանիշներից է համարվում նաև մեծ թռչունը, արծիվը, որը հանդիպում է հին ժողովուրդների առասպելաբանական պատկերացումներում: Արծիվը երկնային, արևի լույսի, կրակի և անմահության խորհրդանիշն էր[17]: Վանա լճի հետ կապված մի ավանդազրույցում, երբ արևը դուրս է գալիս ծովից, երկրին շատ մոտիկ է լինում և եթե նրա դիմաց դուրս չգա մի մեծ թռչուն, որն իր հսկայական թևերով խվանի է անում երկրին, արևը կարող է այրել ու մոխրացնել երկիրը: Թռչնի թևերը խանձվում են, նա անկենդան ընկնում է ծովի մեջ, զովանում, բուժվում և մյուս առավոտ կազդուրված նորից դուրս է գալիս արևի դեմ՝ երկրին հովանի անելու[18]:

Մեկ այլ լեգենդ էլ է կապված Վանա լճի Աղթամար կղզու հետ, որն առավել հայտնի դարձավ Հովհաննես Թումանյանի հրաշալի մշակմամբ: Ըստ այս լեգենդի, ամեն գիշեր երիտասարդ պատանին նետվում էր լիճը և լողալով հասնում իր սիրած աղջկա՝ Թամարի մոտ, որը ջահը ձեռքին սպասում էր նրան: Մի օր էլ կղզու բնակիչները, իմանալով երիտասարդ սիրահարների մասին, հանգցնում են կրակը: Պատանին ալեկոծ լճում կորցնելով ճանապարհը՝ մոլորվում է ալիքների մեջ և մրմնջալով սիրած աղջկա անունը. «Ա՛խ Թամար, ա՛խ Թամար, այս ինչ արիր ինձ», - խեղդվում է: Կղզին այդ օրվանից կոչվում է Աղթամար[19]: Այս լեգենդը որոշ առումներով կարելի է հանգեցնել սիրո և պտղաբերության աստվածուհու և նրա սիրեցյալի՝ մեռնող-հարություն առնող արևային աստծո մասին առասպելույթին, որը տարածված էր Շումերից ու Աքքադից մինչև Հունաստան, Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ: Շումերում դա Ինննանան և Դումուզին են, Աքքադում՝ Իշթարն ու Թամմուզը, Հունաստանում՝ Աֆրոդիտեն և Ադոնիսը, Փոքր Ասիայում՝ Կիբելեն և Ատտիսը, իսկ հայկական հավատալիքներում՝ Արա Գեղեցիկն ու Շամիրամը: Նկատենք, որ Աղթամարի լեգենդում տղան զովհում է գիշերով ալեկոծ լճում, որն, ինչպես նշեցինք արդեն, ըստ հնագույն պատկերացումների, խորհրդանշում է անդրաշխարհը: Վերոնշյալ բոլոր աստվածությունները՝ Դումուզին, Թամուզը, Ադոնիսը, Արա Գեղեցիկը ևս մահանում և անդրաշխարհ են ընկնում աստվածուհու սիրո պատճառով: Նրանց մահն ու վերածնունդը խորհրդանշում են բնության մեծ ու փոքր շրջաուիուլերը՝ ցերեկ-գիշեր, գարուն-ձմեռ: Այս աստվածությունների վերակենդանացմամբ զարթոնք է ապրում բնությունը, վերստին ծագում է արևը:

Այս ոլջ շարադրանքը վկայում է այն մասին, որ Վանա լճում և նրա ավազանում հնագույն ժամանակներից ի վեր տարածված է եղել արևի

պաշտամունքը, որի արձագանքները հասել են մինչև քսաներորդ դարն անգամ: Վան քաղաքի մերձակայքում ապրող հայերի մեջ քսաներորդ դարում տարածված է եղել հետևյալ սովորույթը. արևածագին նորապսակները բարձրացել են տան տանիքին՝ դեմքով շրջվելով դեպի արևը, իսկ ներքևում կանգնած մարդիկ երկնային լուսատուին ուղղված ձոն-երգով արև են խնդրել թագավորի ու թագուհու՝ այսինքն փեսայի ու հարսի համար.

Էգ (այգ), բարև, ա՛յ էգ, բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տա թագավորին շատ արև,
Վահե՛, Վահե՛»:
Էգ (այգ), բարև, ա՛յ էգ, բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տա թագուհուն շատ արև,
Վահե՛, Վահե՛[20]:

Ուշադրություն դարձնենք, որ այս վերջին բացակաչությունը՝ Վահե, Վահե, կարծես ակնարկում է Վահագն աստծուն, որին նվիրված մեհյանը Աշտիշատում կոչվում էր Վահեվանյան: Այսինքն, մինչև 20-րդ դարը հասած այս արևապաշտական ծեսն իր ակունքերով հնարավոր է հանգում է Վահեվանյան Վահագնի պաշտամունքին:

HASMIK HMAYAKYAN
(IOS)

THE SUN CULT IN THE BASIN OF THE LAKE VAN

The Sun cult emerged in the Armenian Highlands from the time immemorial existing for centuries. The most ancient cradle of this cult was the Lake Van basin, which is evidenced by Hittite, Urartian inscriptions, Armenian sources, legends and rituals. The author of the article summarizes the available material as far as it is possible relating the sun cult in the Lake Van basin showing that the tradition survived up to the 20th century among Armenians.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Иванов В. В., Луна, упавшая с неба, Древняя литература Малой Азии, Гимны Солнцу, М., 1977, с. 105.
2. Иванов В. В., նույն տեղում, Телепинус и дочь Океана, с. 54-55.
3. Նույն տեղում, Солнце и Океан, с. 154.
4. Гамкрелидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы, Реконструкция и историко-типологический анализ праязыка и прокультуры, Тбилиси, 1984, т. 2, с. 896.
5. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ.1, Եր., 1978, էջ 76-77, Հարությունյան Ս., Հայ առասպելարանություն, Բեյրութ, 2000, էջ 45:

6. Շիվինիի անունը բացատրվում է խեթերեն šuš - աստված. արևի աստված բառով՝ Гамкрелидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык, Гамкрелидзе, В.В. Иванов, Индоевропейский язык,.т. 2, с. 791.
7. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 83:
8. Նույն տեղում, էջ 106:
9. Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970, գիրք չորրորդ, (34-36), էջ 98:
10. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը, նիրաածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., 1968, գլուխ ԺԶ, էջ 98-101:
11. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գլուխ ԺԸ, էջ 102-103:
12. Дьяконов И.М., К вопросу о символе Халди, Древний Восток, 1983, IV, с. 193.
13. Петросян А., Армянский Мгер, западный Митра и урартский Халди, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Եր., 2004, էջ 42-60:
14. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գլուխ ԼԱ, էջ 119-120:
15. Ղանալանյան Ա., Ավանդապատում, էջ 82:
16. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գլուխ ԼԱ, էջ 119-120:
17. Мифы народов мира, Энциклопедия, т. 2, М., 1982, с. 258-259.
18. Ղանալանյան Ա., Ավանդապատում, էջ 3-4:
19. նույն տեղում, էջ 83-84:
20. Լալայան Ե., Վասպուրական, Թիֆլիս, 1911, եր. 44; Լեո, երկերի ժողովածու. հ. 1, Եր., 1966, էջ 269: